

Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

 Վ. Կարապետյան

ԱՌՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20.07.2016թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 15.06.2016թ.-ի թիվ 57 կարգադրությունը, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում անցկացվեց 2015թ.-ի գործունեության ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյանի, գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի, Հ.Ավետիսյանի և Խ.Խաչատրյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՓԲԸ-ի տնօրեն՝ Ռ. Ասլանյանը և հաշվապահ՝ Ա. Ղազարյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

դ/ Գնումների համապատասխանությունը <<Գնումների մասին>> ՀՀ օրենսդրության պահանջներին.

ե/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանը, Հ.Ավետիսյանը և Խ.Խաչատրյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Վ.Կարապետյանը Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը ունեն ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երեք տարվա աշխատանքային փորձ: Խ.Խաչատրյանը ունի 6 ամսվա ներքին աուդիտորի փորձ:

<<Վայքի ԲՄ>> Փակ բաժնետիրական ընկերություն՝ ք. Վայք:

Գործունեության նպատակը՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժսպասարկում:

Ընկերությունը ստեղծվել է «Վայքի հիվանդանոց» և «Վայքի պոլիկլինիկա» Փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին թիվ 1724 - Ա որոշման համաձայն և հանդիսանում է նրանց իրավահաջորդը: Գրանցված է Պետական Ռեգիստրում 01.03.2004թ., վկայականի համարն է 03 Ա - 63909, ՀՎՀՀ-09103554:

Ընկերությունն ունի հիմնադրի կողմից հաստատված կանոնադրությունը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 31338 հազար դրամ:

Ընկերությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով իր անվանմամբ կլոր կնիք, բանկային հաշիվ և անհատականացման այլ միջոցներ:

Հաշվապահական հաշվառումը վարվում է գլխավոր հաշվապահի կողմից:

Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքով սահմանված հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվությունների կազմելու սկզբունքները պահպանված են:

Գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման տվյալների հիման վրա՝ շրջանառության տեղեկագրում: Իրականացվում է անալիտիկ և սինթետիկ հաշվառում:

Դրամարկղային գործունեությունը իրականացվում է ՀՀ կառավարության 08.10.2003թ.-ի ՀՀ Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 1408-Ն որոշման համաձայն: Գանձապահի հետ կնքվել է նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագիր:

Հաստատված է ընկերության հաստիքացուցակը և ծախսերի նախահաշիվը:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը, ինչպես նաև դեղորայքի առկա մնացորդը և մատյանում հաշվառված տվյալները: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ՌԻՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը, ներքին վերահսկողության համակարգը վերապահումով բավարար է գործել:

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	189653	184897.2	184279.3	184279.3	192751.9	192751.9	3098.9
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	189053	167154.4	184279.3	184279.3	192751.9	192751.9	3698.9
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	160496		157909.6	157909.6	161059.6	161059.6	563.6
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Սպարանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	28557		26369.7	26369.7	31692.3	31692.3	3135.3
Գրասենյակային նյութեր և հագուստ	1500		1144.1	1144.1	1838.4	1838.4	338.4
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	1220		1862.6	1862.6	2241	2241	1021
Դեղորայք և լաբորատոր նյութեր	9000		5337	5337	8736.1	8736.1	-263.9
Այլ ծախսեր	2776		5073.5	5073.5	2168.2	2168.2	-607.8
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր	5		12.2	12.2	12.2	12.2	7.2
Ներքին գործուղումներ	350		350	350	350	350	0
Կապի ծառայության վճարներ	1000		1102.2	1102.2	1090.4	1090.4	90.4
Կոմունալ ծառայությունների վճար	11140		8587.9	8587.9	11584	11584	444
Էլ. էներգիայի և գազի ծախսեր	6000		3654.4	3654.4	6511.4	6511.4	511.4
Վառելիքի և տրանսպորտային ծախսեր	3200		2772	2772	2772	2772	-428
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	1140		1337.9	1337.9	1477	1477	337
Այլ ծախսեր	800		823.6	823.6	823.6	823.6	23.6
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	1566		2900.2	2900.2	3672	3672	2106
Հիմն.միջ. ամորտիզ.	600						0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.		155					0
Վճարովի ծառայութ.		14834.2					0
Այլ ծրագրեր*		973.5					
Այլ ծրագրեր**		352.9					
Այլ ծրագրեր***		1427.2					

14834.2 հազ.դրամ՝ վճարովի ծառայություններ /կազմակերպություններից ստացված վճարներ՝ 3528.5 հազ.դրամ, քաղաքացիների հետազոտության դիմաց վճարներ՝ 11305.7 հազ.դրամ/:

* 973.5 հազ.դրամ՝ սկրինինգի գումարներ

** 352.9 հազ.դրամ՝ զբաղվածության կենտրոնի կողմից տրված գումար

*** 1427.2 հազ.դրամ՝ Ֆինանսների նախարարության կողմից կուտակային վճարների հետ վերադարձ

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց. ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		Էլ. էներգ. ծախսեր.		Ջեռուցում / գազ /		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
ՄՈ.01.01.1 ք.														
Շրջանառություն 201 ք.													0.0	0.0
ՄՈ.01.01.15ք.													0.0	0.0
Շրջանառություն 2015ք.					7.6		37.4		552.5			520.4	597.5	520.4
ՄՈ.01.01.16ք.	157909.6	161059.6			1102.2	1090.4	2311.7	3802.8	1342.7	2708.6	21613.1	24090.5	184279.3	192751.9
		3150.0			19.4			1453.7		813.4		2997.8	19.4	8414.9

<<Հառիթափի ԱԱԴԿ>> ՊՈԱԿ-ի կողմից 213.3 հազ. դրամի չափով դեբիտորական պարտքը աղյուսակում չի արտահայտվել, քանի որ նշված պարտավորությունները, որպես ծախս չի դիտվում:

Ճահութահարկի և շահաբաժնի գծով պարտավորությունները աղյուսակում չեն արտահայտվել, քանի որ նշված պարտավորությունները, որպես ծախս չեն դիտվում: Այդ պարտավորությունների գումարը կազմում է 3512.2 հազ. դրամ /շահութահարկ՝ 2983.2 հազ.դրամ, շահաբաժին՝ 529.0 հազ.դրամ/, որը արտացոլվել է հաշվեկշռում, որպես ընթացիկ պարտավորություն:

Առ 01.01.16թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքերը կազմում են 416.1 հազ.դրամ /213.3 հազ. դրամ՝ <<Հառիթափի ԱԱԴԿ>> ՊՈԱԿ, 19.4 հազ. դրամ՝ կապի ծառայություն, 182.4 հազ. դրամ՝ արտոնագրային վճար, 0.6 հազ. դրամ՝ ԱԱՀ, 0.4 հազ. դրամ՝ նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ/ իսկ կրեդիտորական պարտքերը կազմում են 12110.5 հազ.դրամ / շահաբաժին՝ 529.0 հազ.դրամ, եկամտային հարկ՝ 3047.5 հազ.դրամ, սոց. վճար՝ 102.5 հազ.դրամ, շահութահարկ՝ 253.4 հազ.դրամ, բնավճար՝ 7.9 հազ.դրամ, էլ. էներգիա՝ 1453.7 հազ.դրամ, ջեռուցում/գազով՝ 813.4 հազ.դրամ, ջրի վարձ՝ 231.8 հազ.դրամ, <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ին՝ 2521.5 հազ.դրամ, <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ին՝ 762.4 հազ.դրամ, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ին՝ 186.0 հազ.դրամ, <<Ռիխտեր-լամբրոն>> ՍՊԸ-ին՝ 159.3 հազ.դրամ, <<Վագա-Ֆարմ>> ՍՊԸ-ին՝ 31.7 հազ.դրամ, ԱԶ <<Էմմա Հանիսյան>>՝ 55.0 հազ.դրամ, ԱԶ <<Ասյա Մարգարյան>>՝ 310.0 հազ.դրամ/դեդորայք/, ԱԶ <<Աշոտ Գասպարյան>>՝ 68.4 հազ.դրամ /գրենական պիտույքներ/, ԱԶ <<Տիգրան Հովհաննիսյան>>՝ 694.3 հազ.դրամ /տպագրական ձևաթղթեր/, ԱԶ <<Թերեզա Գաբրիելյան>>՝ 18.2 հազ.դրամ /դեդորայք/, <<Էկոլոգիա Վ.Կ.Հ.>> ՍՊԸ՝ 35.0 հազ.դրամ և << ԱՆ ԴՀՀՏ ՎԶՄ ՓԿ ՊՈԱԿ՝ 829.5 հազ.դրամ:

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Ծեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	163688	163688	0
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	163688	163688	0
արժեքը	163688	163688	0
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	4400	5295.5	895.5
Նյութեր	1497	2176.4	679.4
փոքրարժեք և արագամաշ առարկաներ			0
մն.արժ.	2085	2085	0
արժեքը	2085	2085	0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ. պարտքեր	200	416.1	216.1
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ. սոց. ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի նետ			0
Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական			0
վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ		183.4	183.4
հաշվարկներ հաշվետու անձանց հետ		19.4	19.4
հաշվ տարբ. դեբիտ. հետ	200	213.3	13.3
դրամական կան միջոցներ, որից	618	618	0
դրամարկդ	587.3	587.3	0
հաշվարկային հաշիվ	30.7	30.7	0
Հաշվեկշիռ	168088	168983.5	895.5
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	156873	156873	0
Կանոնադրական կապիտալ	31338	31338	0
Լրացուցիչ կապիտալ	125535	125535	0
Հաշվետու տար. չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	11215	12110.5	895.5
այդ թվում			0
հաշվարկ. մատակ. և կապալ. հետ	8064	5671.3	-2392.7
հաշվարկներ բյուջեի հետ	3048	3837.8	789.8
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.	103	102.5	-0.5
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների			0
վճարման գծով			0
հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ		2498.9	2498.9
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
զալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	168088	168983.5	895.5

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

**Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն**

առ. 01.01.2014թ. - առ 01.01.2015թ.

Ձև N 4
հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	155.0	155.0	0.0
գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	167154.4	167154.4	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարծառնական ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	17587.8	17587.8	0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	184742.2	184742.2	0.0
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100	11115.7	11115.7	0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110			
Տրված կանխավճարներ	120	15254.0	15254.0	0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	157909.6	157909.6	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	184279.3	184279.3	0.0
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	462.9	462.9	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		617.9	617.9	0.0

Աեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Կատարվել է ընկերության ֆինանսական գործունեության վերլուծություն 2015թ.-ի հաշվեկշռի տվյալների հիման վրա հետևյալ ցուցանիշների միջոցով.

1. Ֆինանսական անկախության գործակից.

$$q_1 = \frac{\text{սեփական կապիտալ}}{\text{հաշվեկշռի հանրագումար}} = \frac{156873}{168983} = 0.92, \text{ նախորդ տարի՝ } 0.99/-0.07/$$

Այն ցույց է տալիս թե ընկերության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Այն բավարարում է այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.5):

2. Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակից, որը ցույց է տալիս թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություն ունի կազմակերպությունը:

$$q_2 = \frac{\text{փոխառու կապիտալ}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{\text{ընթ. պարտավ.} + \text{ոչ ընթ. պարտավ.}}{\text{սեփական կապիտալ}} = \frac{12110}{168983} = 0.07$$

որը չի բավարարում այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.1): Նախորդ տարի այն կազմել է 0.005

3. Սեփական շրջանառու միջոցներով ապահովվածության գործակից.

$$q_4 = \frac{\text{սեփ. կապիտալ} + \text{ոչ ընթ. պարտավ} - \text{ոչ ընթ. ակտիվ.}}{\text{ընթացիկ ակտիվներ}} = \frac{4400}{12110} = 0.36$$

Այն բավարարում է նորմատիվային փոքրագույն արժեքին՝ (0.1): Նախորդ տարի՝ 0.89

4. Ընթացիկ իրացվելիության գործակից, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը.

$$q_5 = \frac{\text{ընթացիկ ակտիվներ}}{\text{ընթացիկ պարտավորություն}} = \frac{4400}{12110} = 0.36$$

Այս ցուցանիշը չի բավարարում է սահմանային նվազագույն արժեքին՝ (2):

Ֆինանսական գործունեության վերլուծությունից պարզվում է, որ ընկերությունը բավարար չափով է ապահովված չե ընթացիկ ակտիվներով:

Առաջարկվում է. Համապատասխանեցնել 2-րդ ցուցանիշը սահմանված նվազագույն նորմայի հետ:

Ընկերության հաստիքային միավորների թիվը՝ 141.6:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը՝ 126:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 189631.3 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 184742.2 հազ.դրամ:

Որից՝

- պետական պատվեր՝ 171461.9 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 167154.4 հազ.դրամ /4307.5 հազ.դրամ թերակատարում/:

- վճարովի ծառայություններ՝ 15000.0 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 14834.2 հազ.դրամ /165.8 հազ.դրամ թերակատարում/:

- այլ եկամուտներ /համաշխարհային բանկի կողմից վարկ /սկրինինգ/՝ 1742.2 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 973.5 հազ.դրամ /768.7 հազ.դրամ թերակատարում/:

- այլ եկամուտներ /Ֆինանսների նախարարության կողմից կուտակային վճարների հետ վերադարձ/՝ 1427.2 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 1427.2 հազ.դրամ:

- այլ եկամուտներ /զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից փոխհատուցում/՝ նախատեսված չէ, փաստացի կատարում՝ 352.9 հազ.դրամ:

- տարվա սկզբի դրամական մնացորդ՝ 155.0 հազ.դրամ:

- տարվա վերջի դրամական մնացորդ՝ 617.9 հազ.դրամ:

01.01.2015թ.-ի դրությամբ ընկերության դեբիտորական պարտքը կազմում է 416.1 հազ. դրամ:

01.01.2015թ.-ի դրությամբ ընկերությունը ունի 12110.5 հազ.դրամ կուտակված կրեդիտորական պարտք, որն ապահովված չէ դրամական ազատ միջոցներով: Ընկերությունը աշխատել է 9654.4 հազ.դրամ վնասով:

Կազմակերպությունը սպասարկել է 10174 բնակիչ: Համաձայն գլոբալ բյուջեի՝ հաշվառված բնակիչների թիվը կազմում է 10174 բնակիչ, որից մեծահասակներ՝ 7828 բնակիչ և մինչև 18 տարեկաններ՝ 2346 բնակիչ, որը բուժական անձնակազմի աշխատավարձի հաշվարկի հիմք է հանդիսացել: Մեր հաշվարկով հաշվառման քարտերը ամբողջությամբ առկա են, ինչպես նաև նրանցում այցելությունների մասին գրանցումները:

<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ում, ըստ հաշվետվության, եկամուտների 90.5 տոկոսը ձևավորվել է պետական պատվերի շրջանակներում, 8.0 տոկոսը գոյացել է վճարովի ծառայություններից և 1.5 տոկոսը՝ այլ եկամուտներից: Ծախսումներում աշխատավարձի և աշխատավարձին հավասարեցված այլ վճարների տեսակարար կշիռը կազմում է 82.3 տոկոս, անցած ժամանակահատվածի 79.5 տոկոսի դիմաց /ոչջամիտ ծախս է համարվում միջինը 70 տոկոս միջակայքը/, դեղորայք և լաբորատոր նյութեր հոդվածով ընդամենը 4.4 տոկոս, այլ ծախսերը կազմում են 13.3 տոկոս:

Իրականացվել է դեղորայքի և վիրակապական նյութերի գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ և կատարողականի աուդիտ:

Համապատասխանության աուդիտ: Գնման գործընթացը ներառում է գնումների պլանավորումը, գնումների նախապատրաստումը, պայմանագրի կնքումը: Առկա է գնումների պլանը, որը սահմանված կարգով կազմվել է և ներկայացվել << Վայոց ձորի մարզպետարան:

Գնումների նախապատրաստում: Սահմանվել է գնումները իրականացնել ՀՀ գնման լուծակցազարգացման

Գնումների նախապատրաստման համար մարմնի ղեկավարը սահմանել է գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում, գնահատող հանձնաժողով: ԾՀ-ում ներառված բոլոր հնարավոր մասնակիցներին ուղարկվել է գնման հրավեր, որում ներառվել են ապրանքների տեխնիկական բնութագրերը, անվանացանկը: Սահմանված կարգով գնման հայտ են ներկայացրել 6 ընկերություններ՝ <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն, <<Արֆարմացիա>> ՓԲԸ-ն, <<Ֆարմեգուս>> ՍՊԸ-ն, <<Լամբրոն ֆարմիմպեքս>> ՍՊԸ-ն, <<Արմեն ֆարմ>> ՍՊԸ-ն, <<Վազա ֆարմ>> ՍՊԸ-ն: Հայտերը գրանցվել են գրանցամատյանում: Հայտերի բացման օրը և ժամին հայտերը բացվել են գնահատող հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովը արձանագրել է նշված ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները: Գնային առաջարկների հիման վրա, գնային նվազագույն առաջարկի սկզբունքով, ըստ չափաբաժինների հաղթող են ճանաչվել նշված կազմակերպությունները, կազմելով համապատասխան արձանագրություն: Հաղթող ընկերություններին ուղարկվել է համապատասխան գրություններ, հաղթող ճանաչվելու մասին պայմանագիր կնքելու համար, կցելով պայմանագրի նախագիծը, միակողմանի տուժանքի պայմանագրի առկայության պայմաններում: Ընկերությունների կողմից ներկայացվել է միակողմանի տուժանքի մասին համաձայնություններ, որոնց առկայության պայմաններում կնքվել են համապատասխան գնման պայմանագրեր:

Կատարողականի աուդիտ: Գնումներ իրականացնելու համար կազմվել են գնման և վճարման ժամանակացույցեր:

<<Նատալի Ֆարմ>> ընկերության հետ կնքվել է 7291165 դրամի գնման պայմանագիր, <<Լամբրոն ֆարմիմպեքս>> ընկերության հետ կնքվել է 943017 դրամի գնման պայմանագիր, <<Ֆարմեգուս>> ընկերության հետ կնքվել է 1871020 դրամի գնման պայմանագիր, <<Արմեն ֆարմ>> ընկերության հետ կնքվել է 682950 դրամի գնման պայմանագիր, <<Վազա ֆարմ>> ընկերության հետ կնքվել է 200000 դրամի գնման պայմանագիր և <<Արֆարմացիա>> ընկերության հետ կնքվել է 1419265 դրամի գնման պայմանագիր: Փոխադարձ համաձայնությամբ <<Նատալի Ֆարմ>> ընկերությունից կատարվել է 4554329 դրամի գնում, <<Լամբրոն ֆարմիմպեքս>> ընկերությունից՝ 417535 դրամի գնում, <<Ֆարմեգուս>> ընկերությունից՝ 1729645 դրամի գնում, <<Արմեն ֆարմ>> ընկերությունից՝ 682950 դրամի գնում, <<Վազա ֆարմ>> ընկերությունից՝ 161100 դրամի գնում և <<Արֆարմացիա>> ընկերությունից՝ 626073 դրամի գնում, որը կազմակերպության բնականոն գործունեության վրա ընթացիկ շրջանառու միջոցներով ապահովվածության ցուցանիշի մասով իր ազդեցությունն է ունեցել: 2 գործակցի դիմաց այն կազմում է 0.36: Տնտեսվել է 4235785 դրամ գումար:

Սահմանվել և իրականացվել է բենզինի գնումը ԾՀ գնման ընթացակարգով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ>> ՍՊԸ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 440 դրամ մեկ միավոր գնային առաջարկով: Կնքվել է 6300լ. բենզինի գնման պայմանագիր 2772.0 հազ. դրամ ընդհանուր գումարով:

պետական ոչ առևտրային կազմակերպության և <<Հոփսիմն ԳԲԱ>> պետական ոչ առևտրային կազմակերպության բենզինի գնման ընթացակարգերի հետ՝ պարզեցինք, որ վերջիններս բենզինի գնումները իրականացրել են համապատասխանաբար <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ>> ՍՊԸ-ից 390 դրամ մեկ միավոր գնային առաջարկով և <<ՖԼԵ2>> ընկերությունից 415 դրամ մեկ միավոր գնային առաջարկով: Նման գնային առաջարկների դեպքում ընկերությունը կտնտեսեր 157500-315000 դրամ:

Սահմանվել և իրականացվել է տպագրական ձևաթղթերի գնում ՇՀ գնման ընթացակարգով: Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտ է ներկայացրել <<Տիգրան Հովհաննիսյան>> ԱԶ-ն, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել: Կնքվել է 2239950 դրամի գնման պայմանագիր, փաստացի կատարվել է 1691300 դրամի գնում: Նախահաշվով նախատեսվել է 1500000 դրամի գնում:

Մեր գնահատմամբ գնումների ընթացակարգերը համապատասխանում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին:

Աուդիտի ընթացքում կատարվեց գույքի, մասնավորապես դեղորայքի և վիրակապական նյութերի անվտանգ պահպանման աուդիտ: Դեղորայքի պահպանումը համապատասխանում է ՀՀ Առողջապահության նախարարի 28.12.2005թ.-ի թիվ 1391-Ա Բժշկական հաստատություններում /հիվանդանոցներում/ դեղերի ու բժշկական նշանակության այլ ապրանքների ստացման, պահպանման, ձեռք բերման, հաշվառման և բաշխման կարգին:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանս, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանս, Հ.Ավետիսյանս և Խ.Խաչատրյանս իրականացրեցինք <<Վայքի ԲՄ>> Փակ բաժնետիրական ընկերության 2015թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2016թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորենք և իրականացնենք, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները քավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ծառայությունների հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Ընկերության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որը արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Արձանագրված թերություններ և խախտումներ:

Ընկերության սեփական կապիտալը մեկ բյուջետային տարում պակասել է 17461.0 հազ.դրամով:

Պետական պատվերի շրջանակներում նախատեսվել է 171461.9 հազ.դրամի եկամուտ, փաստացի կատարվել՝ 167154.4 հազ.դրամի չափով /4307.5 հազ.դրամ թերակատարում/: Վճարովի ծառայություններ՝ 15000.0 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 14834.2 հազ.դրամ /165.8 հազ.դրամ թերակատարում/: Այլ եկամուտներ /համաշխարհային բանկի կողմից վարկ /սկրինինգ/ 1742.2 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 973.5 հազ.դրամ /768.7 հազ.դրամ թերակատարում/: Այլ եկամուտներ /ֆինանսների նախարարության կողմից կուտակային վճարների հետ վերադարձ/ 1427.2 հազ.դրամ, փաստացի կատարում՝ 1427.2 հազ.դրամ:

Ընդամենը նախատեսված դրամական եկամուտներ՝ 189631.3 հազ. դրամ, փաստացի կատարում՝ 184742.2 հազ.դրամ: Ընդամենը թերակատարվել է 5242.0 հազ.դրամ:

Զբաղվածության տարածքային գործակալության կողմից տրված գումարը՝ 352.9 հազ.դրամ, նախահաշվում չի ներառվել:

Ընկերության ընթացիկ ծախսերը նախահաշվով նախատեսվել է 189653.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 192751.9 հազ.դրամի չափով: 3098.9 հազ.դրամի չափով ծախսը հիմնավորված չէ:

Հիմնական միջոցների մաշվածքը նախահաշվով նախատեսվել է 600.0 հազ.դրամ, փաստացի հաշվարկվել է 4370.0 հազ.դրամ: Տարբերություն կազմում է 3770.0 հազ. դրամ:

Տպագրական ձևաթղթեր՝ նախահաշվով նախատեսվել է 1500.0 հազ.դրամ, փաստացի կատարվել է 1691.3 դրամի գնում: Նախահաշվային գումարից ավել է ծախսվել 191.3 հազ.դրամ: Համադրելով <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ – ի հետ՝ պարզեցինք, որ վերջինս տպագրական ձևաթղթերի գնումը իրականացրել է համապատասխանաբար 873.0 հազ.դրամով: Գնային տարբերությունը կազմում է 818.3 հազ.դրամ, որը կարող էր տնտեսվել ընկերության կողմից:

Բենզինի գնումը իրականացվել է <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ԲՈՐՓՈՐԵՅՇՆ>> ՍՊԸ-ից, որն էլ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել 440 դրամ մեկ միավոր գնային առաջարկով: Կնքվել է 6300լ. բենզինի գնման պայմանագիր 2772.0 հազ.դրամ ընդհանուր գումարով:

Համադրելով <<Արենի>> ԱԱՊԿ պետական ոչ առևտրային կազմակերպության և <<Հոփսիմե ԳԲԱ>> պետական ոչ առևտրային կազմակերպության բենզինի գնման ընթացակարգերի հետ՝ պարզեցինք, որ վերջիններս բենզինի գնումները իրականացրել են համապատասխանաբար <<ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ԲՈՐՓՈՐԵՅՇՆ>> ՍՊԸ-ից 390 դրամ մեկ միավոր գնային առաջարկով և <<Ֆլեշ>> ընկերությունից

կտնտեսներ 157500-315000 դրամ:

Էլեկտրաէներգիայի ծախսեր հոդվածով նախահաշվային գումարից ավել է ծախսվել 802.8 հազ.դրամ, կապի ծառայության վճարներ հոդվածով՝ 90.4 հազ.դրամ և ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճարներ հոդվածով՝ 337.0 հազ.դրամ, աշխատողների աշխատավարձ հավելավճարներ հոդվածով՝ 563.6 հազ.դրամ, ներքին գործուղումներ /գորակոչիկներ/ հոդվածով՝ 23.6 հազ.դրամ, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով՝ 2106.0 հազ.դրամ /մասնագիտական ծառայություններ, համակարգչային ծառայություններ, ավտոմեքենաների ԱՊԱ և տեխ. զննում/, կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդվածով՝ 1021.0 հազ.դրամ /մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման նյութեր, շենքերի ընթացիկ նորոգման նյութեր և կենցաղային նյութեր/:

Ընկերությունը իրականացնում է արտոնագրային վճարով բժշկական ծառայություն: Նշված ծառայության փաստացի եկամուտները կազմել են 3034.4 հազ.դրամ, փաստացի ծախսերը կազմել են՝ 4178.6 հազ.դրամ: Վնասը կազմում է 1144.2 հազ. դրամ:

Ծախսերի մեջ աշխատավարձի տեսակարար կշիռը սահմանված ողջամիտ միջին ցուցանիշից բարձր է 12.3 տոկոսով /այն կազմում է 82.3 տոկոս 70 տոկոսի դիմաց/:

Ըստ նախահաշվի շահույթը կազմում է 133.3 հազ. դրամ :

Ընկերությունը փաստացի աշխատել է 9654.4 հազ. դրամ վնասով: Մեր հաշվարկներով ընկերությունը տնտեսող և օգտավետ գործառույթներ իրականացնելու պայմաններում կարող էր աշխատել 4655.2 հազ.դրամ շահույթով/ $14309.6 - 9654.4 = 4655.2$ /, /Պետ. պատվերի թերակատարում՝ 4307.5 հազ.դրամ, վճարովի ծառայությունների թերակատարում՝ 165.8 հազ.դրամ, համաշխարհային բանկի կողմից /սկրինինգ/ ֆինանսավորման թերակատարում՝ 768.7 հազ.դրամ: Ընդամենը թերակատարվել է 5242.0 հազ.դրամ: Նախահաշվով նախատեսվածից ավել ծախս՝ 3098.9 հազ.դրամ, հիմնական միջոցների մաշվածք՝ նախահաշվով նախատեսվածից ավել է հաշվարկվել 3770.0 հազ.դրամ, տպագրական ձևաթղթերի ողջամիտ ծախսերի տարբերություն /համադրելով <<Եղեգնածորի ԲԿ>> ՓԲԸ- ի հետ/՝ 818.3 հազ.դրամ, բենզինի ողջամիտ ծախսի տարբերություն /համադրելով <<Արենի>> ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի և <<Հոփսիմե ԳԲԱ>> ՊՈԱԿ-ի հետ/՝ միջինը 236.2 հազ.դրամ և արտոնագրային վճարներից վնաս 1144.2 հազ.դրամ: Ընդամենը ավել ծախս՝ 9067.6 հազ.դրամ: Ընդամենը թերակատարված եկամուտների և ավել ծախսերի գումարը կազմում է 14309.6 հազ.դրամ:/

Աուդիտի է ենթարկվել պետական պատվերի շրջանակներում իրականացված բժշկական ծառայությունների արժանահավատությունը: Աուդիտի իրականացման ընթացքում կատարեցինք բնակիչներին՝ տեղամասային թերապևտների կողմից այցելության կամ տեղում սպասարկման վերաբերյալ ամբուլատոր քարտերում սկրինինգի գրանցումների առկայության ընտրանքային աուդիտ: Պարզեցինք, որ մեծահասակների ամբուլատոր քարտերի 101 ընտրանքում 41 քարտում առկա չէ սկրինինգի գրանցում, որը կազմում է ընտրանքի 40.6 տոկոսը, այսինքն, 3178 մեծահասակի ամբուլատոր քարտերում գրանցում չի կատարվել, կամ գրանցված բնակիչներին բժշկական

սպասարկման ծառայություններ չեն իրականացվել: ՀՀ առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. N47-Ն հրամանի պահանջները ամբողջական ծավալով չեն իրականացվել:

Ընկերության պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության գործակիցը, որը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություն ունի կազմակերպությունը կազմում է 0.07, որը չի բավարարում այս ցուցանիշի ցանկալի փոքրագույն մակարդակը՝ (0.1):

Ընկերության ընթացիկ իրացվելիության գործակից, որը ցույց է տալիս ընթացիկ պարտավորությունների ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը կազմում է 0.36, որը չի բավարարում սահմանային նվազագույն արժեքին (2): Ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվներին 2.75 անգամ:

Եզրակացություն: Ընկերությունը չի իրականացնել օգտավետ, տնտեսող գործառույթ, որի արդյունքում աշխատել է 9654.0 հազ.դրամ վնասով, չի ապահովել շահութաբերություն: Նման գործունեության արդյունքում ընկերությունը կարող է հայտնվել հավանական սննկացման գործընթացի մեջ:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց ՓԲԸ-ի տնօրենին՝

ա/ Անհրաժեշտ ենք համարում նախատեսված պետական պատվերով և վճարովի բժշկական ծառայությունները կատարել ամբողջ ծավալով: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

բ/ Նախահաշվում ներառել բոլոր դրամական եկամուտները: (Առաջարկությունների դասակարգման միջին չափանիշ):

գ/ Թույլ չտալ նախահաշվով նախատեսված գումարներից ավել ծախսումներ:

դ/ Թույլ չտալ դրամական միջոցների ոչ նպատակային ծախսումներ:

ե/ Ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 13 սեպտեմբերի 2013թ. N47-Ն հրամանի պահանջներով և պետական պատվերի շրջանակներում բժշկական ծառայությունները /սկրինինգները/ կատարել ամբողջ ծավալով:

զ/ Իրականացնել օգտավետ, տնտեսող գործառույթներ, որը հնարավորություն կտա ընկերությանը աշխատելու շահույթով:

է/ Ընկերության առանձնահատկությունից ելնելով, 2016թ.-ին հիմնական միջոցների տարեկան ամորտիզացիոն տոկոսադրույքները համաձայն <<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքի 12.1 հոդվածի 4-րդ կետի վերանայել և նվազեցնել, որով էականորեն կնվազի բժշկական ծառայությունների ինքնարժեքը:

Առաջարկում ենք Ներքին աուդիտի կոմիտեին՝

ա/ Հանձնարարել ընկերությանը կազմելու գործունեության համալիր առողջացման ծրագիր և ողջամիտ ժամանակահատվածում ապահովել օգտավետ, տնտեսող գործառույթների առկայություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝
Ներքին աուդիտորներ՝

<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ -ի տնօրեն՝
Հաշվապահ՝



Վ. Կարապետյան
Ն. Կարապետյան
Հ. Բազադյան
Խ. Խաչատրյան
Ռ. Ասլանյան
Ա. Ղազարյան